ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՆՉՈՂ ՁԱՅՆԵՐԻ ՂՈՂԱՆՁԸ

Գեղարվեստական խոսքը հայ ժողովրդի՝ դարերի հետ զրուցելու հիմնական տարերքն է: Այդ են վկայում տպագիր այն բազմաթիվ ժողովածուները, որոնք հրատարակվել են առ այսօր՝ զարդարելով ընթերցողների սեղանները:

Նման գրքերից է «Հնչող ձայներ» վերնագիրը կրող ժողովածուն, որի անունն անգամ ընթերցողի հոգում ծիածանում է երկշերտ զգացում՝ մի կողմից՝ կորուստների ցավով, մյուս կողմից՝ հպարտության ապրեցնող ուժով:

Սրտերի հետ զրուցող երկերի այս փունջը կազմել է Ռուզան Առաքելյանը՝ կատարելով շնորհակալ գործ:

Ինչպես միշտ, այս անգամ նույնպես, մայր ժողովրդի ցավի և հպարտության սրտաբուխ խոսքը՝ որպես առաջաբան, գրել է ականավոր գրականագետ Դավիթ Գասպարյանը: Գրքի վերնագիրը կրող համանուն խոսքում նա ժողովածուն համարում է «Հեռացած, հեռու և մոտիկ կանչող ձայներ, որոնք շարունակ հնչում են տիեզերքում: Այդ ձայները հնչում են ծովերի խորքերից, անտառներից, անապատներից, հողի ընդերքից… Այդ ձայները պետք է կարողանալ լսել քամու հառաչի մեջ, ծովի շառաչի մեջ, հողի տնքոցի մեջ, ծաղկող ծաղկի բացվող թերթիկի շշունջի մեջ, քարերի ծանր շնչառության մեջ: Այդ ձայները կան և իրական են… («Հնչող ձայներ», «Համազգային հայ կրթական և մշակութային միություն», «Արմավ» հրատ., Երևան, 2021, էջ 6):

Գրքի առաջաբանին հաջորդում են զոհված ազատամարտիկ գրողների նկարները, որոնց վերաբերյալ գրականագետը խորհրդածում է. «Ես նայում եմ այս տղաների ժպտուն նկարներին, գլխահակ ոտքի եմ կանգնում նրանց առջև, և միայն մի խոսք է կրկնվում իմ մտքում՝ փա՛ռք հերոսներին, փա՛ռք հերոսներին, փա՛ռք հերոսներին… Նրանց հոգու լույսը եռագույնի փայլով այսօր փողփողում է Եռաբլուրում» (էջ 9):

Գրքում զետեղված չափածո և արձակ երկերը կրկին ու կրկին հաստատում են այն կարծիքը, որ հայ ժողովուրդն ի ծնե բանաստեղծ է:

Կորստյան ցավը և հպարտության ազգային զգացումը հուշում են խոնարհումով գրել այդ անմահ հայորդիների անունները. Վարդան Ամալյան… Արտակ Բարսեղյան… Արեն Հովհաննիսյան… Հայասեր Հովսեփյան… Շիրակ Գասպարյան… Ավետիք Կարճիկյան… Վաչագան Մանուկյան… Սուրեն Մելիքբեկյան… Կոմիտաս Հակոբյան… Տիգրան Հարությունյան… Շանթ Նավոյան….:

Ընդգծենք, որ գիրքը կազմողը տեղին է բերել Մեծ Լոռեցու աստվածահաճո խոսքը. «Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին»:

Ընթերցելով գրքում զետեղված երկերը՝ կրկնում ես Մեծն Թումանյանի խոսքը և սփոփանքի զգացումով շշնջում նրանց անունները, ովքեր ոչ միայն ծաղիկներ են նվիրել սերունդներին, այլև իրենք են դարձել հայաբույր, հայախոսք մի աստղաբույլ:

Գիրքը բացվում է Վարդան Ամալյանի լուսանկարով, համառոտ կենսագրությամբ ու Վարդանի հորաքրոջ՝ Աստղիկ Ամալյանի սրտապարար խոսքով, որն ամբողջությամբ գեղարվեստական մի հուշապատում է անմահ զինվորյալ գրողի մասին: Վարդան Ամալյանի արձակ գործերը՝ «Իմ մտքերից», «Ինքնաբնութագիրս», «Բարության ծայրահեղություն», «Մրջյունը», «Մտացրիվ», «Երազ Վարդը, որ աճել էր բետոնի մեջ», «Անվերնագիր»», «Ինչպես բոլորը գիտեն», «Ա» վերնագրերով, վկայում են նրա հասուն արձակագիր լինելը՝ պատկերավոր մտածողությամբ, ինքնատիպ աշխարհընկալմամբ, հարուստ բառապաշարով:

Բազմաշերտ կյանքի ճանաչողության արդյունք են Արտակ Բարսեղյանի չափածո գործերը: Լինելով կերպարվեստի ուսուցիչ՝ Արտակը նաև եղել է տաղանդավոր գրող-

արվեստագետ: Այդ են վկայում նրա հյուսած պատկերները՝ կենսաթրթիռ, թևավորող: Մտնելով սիրո փիլիսոփայության աշխարհը՝ Արտակն իր երջանկության աղբյուրը համարում էր սերը ու խոստովանում.

Ի սեր Աստծո…
Անբաժան ենք, ես՝ քեզանից,
դու՝ ինձանից…
(էջ 42)

Արտակի «Մա՛մ, էլ իմ բարձն ու վերմակը արևին չտաս» պատմվածքը մեր օրերի հայ արձակի մարգարիտներից է: Նրանում հնչում է խաղաղության համար ծնված նոր սերնդի բողոքը պատերազմ հրահրողների դեմ: Սակայն այդ ճիչը հրապարակային ըմբոստություն չէ, այլ ցավից ծլած թախիծ այն տղաների համար, ովքեր Աբո, Մխո, Ալեն անուններով հոգով միանում են Աստծո հրեշտակներին ու նրանց չմոռացող գրող-ընկերոջ սրտին դաջում ափսոսանքի այս խոսքը. «Վա՜խ, տղեք ջան, հազար ափսոս ձեզ, հազար ափսոս ձեզ… փա՛ռք ձեզ, տղե՛ք, լույսի մեջ մնաք, հերո՛ս տղեք» (էջ 47):

Վերընթերցելով Արտակի այս սրտաբուխ խոսքերը՝ հուզմունքից և՛ իմ սիրտը դողաց, և՛ ձեռքերս դողացին… Եվ, ասես, Աստծո ձայնը դողանջեց իմ հոգում հենց նույն բառերով՝ ուղղված Արտակին և իր զոհյալ զինակից ընկերներին. «Վա՜խ, տղեք ջան, հազար ափսոս ձեզ, հազար ափսոս ձեզ, փա՛ռք ձեզ, տղե՛ք, լույսի մեջ մնաք, հերո՛ս տղեք…»:

Պատանեկան անմեղ-աստվածային տենչերի խաղաղ պատկերներ են Արտակի «Քո սև շորը», «Մենք կգրկենք» պատումները:

Հետաքրքիր մի զգացում է պարուրում սիրտդ, երբ էջ առ էջ ըմբոշխնում ես ազատամարտիկ գրողների՝ գրքում զետեղված երգերը: Իրարից անկախ, իրարից հեռու նրանք հանդես են եկել պատասխանատվության մի զուլալ զգացումով՝ մի կողմից՝ երկրի առջև, մյուս կողմից՝ մայր ժողովրդի: Ու կրկնակի հոգիդ ջերմանում է՝ համոզվելով, որ հայոց նոր սերունդը շարունակում է մեր հերոս նախնիների արևաշող ավանդույթները՝ սկսած Գրիգոր Նարեկացուց մինչև Սայաթ-Նովա, Աբովյանից՝ Թումանյան, Չարենցից՝ Պարույր Սևակ: Ժողովրդի մղած գոյամարտերը փառաբանող շարքը շարունակվում է ազատամարտիկ-գրող Շիրակ Գասպարյանի շուրթերին՝ որպես մերօրյա հերոսական քայլերգ.

Ես իր արյան մեջ կխեղդեմ նրան,
Ով իր նզովյալ ոտքով կկոխի հողն իմ հայրենի,
Ու իր հիվանդոտ թոքով կշնչի օդը իմ երկրի,
Ես հայ եմ, մայրիկ, պապերիս ոգին ինձ միշտ զորավիգ,
Անգամ թե պակաս համբույրներ տամ քեզ,
Դու մի բան հիշիր՝ հողս չեմ զիջի ոչ մի թշնամու…
(էջ 53)

Որդիական ազնիվ և անբիծ խոստումներ են Արտակի նաև «Լուռ է քաղաքը», «Անունս հայ է», «Ասում եք կարոտը գույն չունի» և այլ բանաստեղծություններ: Դրանցում մեր ժամանակի հայ երիտասարդ սերդնի բարոյական վեհ կերպարն է հառնում, որի սրտաբուխ խոսքը բոլոր ժամանակների համար է.

Ես պայքարում եմ գիշեր ու ցերեկ,
Որ ինձնից հետո ընկեր, բարեկամ, անգամ և ծանոթ,
Անունս տալիս շիկնելու պատճառ բնավ չունենան,
Գլուխ չկախեն, ամոթ էլ չզգան նրանք ինձ համար:
(էջ 61)

Նվիրյալ հայրենասերի պատկերավոր խոսքի սրտառուչ արտահայտություններ են Ավետիք Կարճիկյանի երգերը: Անարգ թշնամուն ուղղված կրակոտ, վրեժի հյուսվածքներ են նաև Ավետիք Կարճիկյանի բանաստեղծությունները, որոնք հնչում են որ-

պես պայքարի և հաղթանակի օրհներգեր:

Գրքի հերթական՝ 72-րդ էջից մինչև 93-րդ էջը հատկացված է Կոմիտաս Հակոբյանի բանաստեղծություններին: Արցախի Մարտունու շրջանի Քերթ գյուղում՝ բազմանդամ ուսյալ ընտանիքում ծնված Կոմիտասը ստեղծագործել սկսել է դպրոցական տարիներից: Մարտի դաշտ է մեկնել, երբ սովորում էր Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսում: Նա հերոսաբար զոհվել է Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի պաշտպանական թեժ մարտերում: Քերթ գյուղի միջնակարգ դպրոցը կրում է նրա սուրբ անունը: Ետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով: 2017-ին, Ստեփանակերտում լույս է ընծայվել Կոմիտասի «Գոյության պատրանք» գիրքը:

Կոմիտաս Հակոբյանի բանաստեղծությունների շարքը՝ զետեղված «Հնչող ծայներ» ժողովածուում, կրկին անգամ վկայում է, որ նա ոչ միայն նվիրյալ հերոսամարտիկ է, այլև տաղանդավոր պոետ, որն ազատամարտիկի իր կյանքը զարդարել է պոեզիայով, պոեզիան՝ իր կյանքով: Թշնամուն խոցող զենքի պես դիպուկ է նաև նրա երգը՝ գրված ոչ միայն իր օրերի, այլև ապագա սերունդների համար, սերունդներ, որ իրենց հավերժագնա ճանապարհին հնչեցնելու են նրա այս երդումը՝ ուղղված հայրենի երկրին.

Սև անգղերը շանթահարում են
քո կապույտ լռությունը,
դարավերջի արկ ու հրթիռները
քրքրում են քեզ,
Բայց, երկիր իմ,
Խրամատում համառ է զինվորդ:
(էջ 77)

«Հնչող ծայներ» գիրքն ընթերցելիս անպայմանորեն հետադարձ հայացքով գրուցում ես գիրքը կազմողի՝ Ռուզանի հետ՝ այնքան խորիմաստ, կարոտակեզ ու թևավորող կենսագրականների առիթով: Ռուզանը մոր ու քրոջ սրտի ոսկեփոշով է օծել զոհյալ գրողների համառոտ կենսագրությունները: Կարդում ես Տիգրան Հակոբյանին ներկայացնող նրա խոսքը, անպայմանորեն դեմդ հառնում է հերոս-ազատամարտիկը: Եվ նշենք, որ նման պատումներն իրենց հերթին նպաստում են ժողովածուի կենսափիլիսոփայական արժեքին:

Տիգրանի «Սև արագիլ» վիպակը, որ ամբողջությամբ ներկայացված է գրքում, վկայում է այն փաստը, որ Տիգրանը ծնվել է Աստծո օրհնանքով որպես գրող: Եվ ճիշտ է վարվել Ռուզանը, որ այն գրքում զետեղել է լրիվությամբ: Վիպակը մեր ժողովրդի ճակատագիրը պատկերող լավագույն գործերից է:

Ափսոսանքի ու հպարտության մի նոր ալիք է շոյում սիրտդ, երբ ծանոթանում ես Արեն Հովհաննիսյանի կենսագրությանն ու բանաստեղծություններին: Կյանքում նպատակամետ լինելու, անձնուրաց սիրելու, հայրենիքի նվիրյալ զինվորը լինելու գաղափարներն են շոշափված նրա գործերում: Ըստ Արենի՝ արդար մարդու մասին ասված խոսքը «արժեք ունի», որը վկայում է նրա անմահությունը գալիք դարերում:

Արցախի Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղի արծվասիրտ զավակներից է Հայասեր Հովսեփյանը, որն անցել է կյանքի կոփող ճանապարհներով՝ որպես ուսանող, մագիստրոս, զինվոր, ուսուցիչ: Նրա «Սիրտս երգերի մեջ» ժողովածուն՝ հրատարակված 2012-ին, եկավ ապացուցելու, որ Արցախի գրողների ընտանիքն ունի մի նոր, աստվածաշնորհ գրող: Հայասերը՝ որպես անվանը վայել հայորդի, զոհվեց Արցախյան երկրորդ պատերազմում՝ շուրթերին հետևյալ կրակոտ տողերը՝ նվիրված հայրենիքին.

Ես մարմին ունեմ ըմբոստ,
որ տվել եմ խրամատներիդ արնածարավ
և ծածկում եմ
ահա

քո մարմինը փխրուն
մարմնով իմ պողպատե,
բեկելով սլացքը դեպի քեզ սուրացող
մահաբեր գնդակների:
(էջ 149)

Հասուն լրագրող էր Վաչագան Մանուկյանը, երբ կամավոր նվիրվեց Արցախի պաշտպանությանը, մարտնչեց Մատաղիսի և Շուշիի կատաղի մարտերում՝ կյանքն ընծայելով մայր ժողովրդի ազատությանը: Էջմիածին քաղաքի սուրբ օջախներից մեկում աշխարհ եկած Վաչագանն իրեն համարեց Վաչագան արքայի ժառանգորդը ու կյանքը նվիրեց հայոց հավերժական ընթացքի գոյամարտին: Մարտից առաջ զինվոր ընկերները հնչեցրել են նրա հետևյալ իմաստուն խորհուրդը. «…Հիշեք՝ հաղթողներին պաշտում են անգամ իրենց երբեմնի թշնամիները: Արդար հաղթանակը հզորության վառ գույների ամբողջությունն է: Հաղթիր, և կպատվեն քեզ, երբ փշրես դժվարություններից հյուսված արգելքները» (էջ 161):

Վաչագան Մանուկյանի ընկալմամբ՝ ապահով ներկայի արմատները խրված են պատմական անցյալի պարարտ հողում, ուստի ներկան անսասան է՝ միտված ապագային: Նա բարձրաձայնում է հպարտ. «Տիգրան Մեծի Հայաստանը սրտումս պատկերված եմ գնում, ինձ հաղթել չի լինի…»: (էջ 162)

Վ. Մանուկյանի «Մահից յոթ րոպե առաջ կամ ուղղակի ԳՆԴԱՊԵՏԸ» պատումը գրական նոր երևույթ կարելի է համարել ժանրային առումով: Ընդգծենք, սակայն, որ պատումի այդ նորույթը թելադրված է ժամանակի պահանջով: Ժամանակ, որ միանգամայն նոր է՝ հենված ժողովրդի անցած հերոսամարտերի անառիկ պարիսպներին: Ժողովրդի ազատասեր մարտիկներին միասնության կոչող կենսափիլիսոփայական պատկեր է այն՝ հնչեցված բոլոր ժամանակների համար:

Մեր օրերի հայ երիտասարդի հուզիչ և օրինակելի կենսագրությամբ է բացվում գրքի հերթական պատումը՝ «Սուրեն Մելիքբեկյան» խորագրով: Տավուշի մարզի Բերդ քաղաքում աշխարհ եկած Սուրենը ևս պետք է իր առյուծասիրտ ընկերների հետ հայ ժողովրդի ապագայի համար դառնար անձնուրաց զինվոր ու մարտնչեր Հայոց Արցախի ազատության դիրքերում: 2020-ի սեպտեմբերի 27-ին նա իր մահկանացուն կնքեց Մարտակերտում ու միացավ հայ ժողովրդի անմահ զավակների շքերթին: Սուրենի հիշատակը հավերժացնելու համար Երևանի պետական համալսարանի երկրաբանական բաժանմունքի լսարաններից մեկն անվանակոչվել է նրա անունով: Գրքում զետեղված նրա «Երկնային կյանքով ապրող հրեշտակ», «Անմոռաց սեր», «Սիրտս լալիս է քեզ հետ», «Սեր և հայրենիք» և այլ հյուսվածքներ վկայում են ոչ միայն նրա քաղաքացիական կուռ կամքը, այլև հասուն բանաստեղծ լինելը:

Ժողովածուն եզրափակվում է Շանթ Նավոյանի կենսագրական պատումով և արձակ բանաստեղծությունների շարքով: Հերոսության, ընկերասիրության, ազնվության բարոյական հիմնախնդիրներ արծարծող նրա պատմվածքներն ու խոհերն ընթերցվում են հետաքրքրությամբ:

Ավարտելով ժողովածուի ընթերցումը՝ կրկին ու կրկին վերհիշում ես Մեծ Լոռեցու իմաստուն խոսքը. «Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին…»:

Աշխարհի բոլոր ազգերը 21-րդ դարին են հասել յուրատիպ ճակատագրերով: Նրանց թվում աչքի է ընկնում մեր ժողովուրդը՝ իր դժվարին, սակայն աստղաշող ճանապարհով, որը պաշտպանվել ու պաշտպանվում է նրա հերոս զավակների շնորհիվ: Ասել է թե՝ հերոս որդիներ ծնող ժողովուրդը շարունակելու է հարատևման ճանապարհը՝ հետևելով իր առյուծասիրտ զավակների հաղթարշավին:

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Կարեն Խանյան